ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«06» Դեկտեմբերի 2026 **թվականի** N3239-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 13-Ի N 1668 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ ՎԿԱՅԱԿԱՆԸ ՉԵՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասով, հինք ընդունելով քաղաքացի Ադմիրալ Ղարիբյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2026 թվականի հոկտեմբերի 16-ին N 18879 թվագրմամբ) և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Շահումյան փողոցի փողոցաշինության նպատակով տեղահանվել է Շահումյան փողոց N 141/2 հասցեում գտնվող ժամանակավոր տաղավարը՝ **որոշում եմ.**

1. Ուժը կորցրած ճանաչել 2008 թվականի օգոստոսի 13-ի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետի «Քաղ. Ադմիրալ Ղարիբյանին ժամանակավոր տաղավար տեղադրելու նպատակով 10,5 քառ.մ մակերեսով հողամաս կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին» N 1668 որոշումը:
2. Լուծել համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին 2008 թվականի օգոստոսի 27-ի (գրանցված սեղանամատյանում N 5907) N 143 պայմանագիրը:
3. Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե N 0106932 վկայականը չեղարկելու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Ադմիրալ Ղարիբյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026 թ. ք.Գյումրի